

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ  
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ  
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ  
N ՀՀՎԱ-ԳՀԾԶԲ-21/38-1**

ք. Երևան

« 02 » հուլիս 2021թ

Վարչապետի աշխատակազմն, ի դեմս աշխատակազմի գործերի կառավարիչ Գարիկ Բոջանի, որը գործում է աշխատակազմի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՀՀ պետական կառավարման ակադեմիա» ՊՈԱԿ-ն, ի դեմս ռեկտոր Արսեն Լոբջանի, որը գործում է Ակադեմիայի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է աշխատակիցների վերապատրաստման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը:

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն:

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը:

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը:

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

### 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված տասը աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

### 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության առավելագույն գինը կազմում է 2 731 080 (երկու միլիոն յոթ հարյուր երեսունմեկ հազար ութսուն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

### 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## **6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՌԻՓԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)**

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## **7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ**

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող

է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

### Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ

Վարչապետի աշխատակազմ  
ք.Երևան, Հանրապետության հրապարակ,  
Կառավարական տուն, 1

ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Հ/Հ 900011024354

ՀՎՀՀ 02505554



### Կ Ա Տ Ա Ր ՈՂ

ՀՀ պետական կառավարման ակադեմիա

ք.Երևան, Կիևյան-8

Երևանի թիվ 1 ՏԳԲ

Հ/Հ 900018005646

ՀՎՀՀ 00035088



**ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ\***

ՀՀ դրամ

| Ծառայության                          |                                                                           |                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                    |                |                                      |                  |                                         |                                      |
|--------------------------------------|---------------------------------------------------------------------------|------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|----------------|--------------------------------------|------------------|-----------------------------------------|--------------------------------------|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | տեխնիկական բնութագիրը                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                              | Չափման միավորը | Ընդհանուր առավելագույն գինը /ՀՀ դրամ | Ընդհանուր քանակը | մատուցման                               |                                      |
|                                      |                                                                           |                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                    |                |                                      |                  | հասցեն                                  | Ժամկետը                              |
| 1                                    | 79631200/18                                                               | <p>1.Աշխատակիցների վերապատրաստման ծառայություններ</p> <p><b>Որոշումների կայացում.</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• Որոշումների տեսակները</li> <li>• Որոշում կայացնելու գործընթացը</li> <li>• Որոշում կայացնելու միջավայրը</li> <li>• Որոշում կայացնելու մեթոդները</li> <li>• Որոշումների տարբերակների մշակում, լավագույն որոշման ընտրություն և որոշման կայացում</li> </ul> <p>Վերապատրաստման ենթակա քաղ. ծառ. թվաքանակը՝ 131<br/>Ծրագրի տևողությունը՝ 2 շաբաթ<br/>Հեռավար ուսուցման մոդուլի ծավալը՝ 20-49 էջ<br/>Խմբերի քանակը՝ 5 (առավելագույնը՝ 35 մասնակից)</p> | դրամ           | 126 000                              | 1                | ՀՀ, ք.Երևան<br>Մատակարարի նշած հասցեում | 2021 թվականի 3-րդ և 4-րդ եռամսյակներ |
| 2                                    | 79631200/19                                                               | <p>2.Աշխատակիցների վերապատրաստման ծառայություններ</p> <p><b>Խնդրի լուծում.</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• Տեղեկատվության հավաքագրում, վերլուծություն</li> <li>• Խնդիր հարուցող պատճառները</li> <li>• Հնարավոր լուծումները</li> <li>• Լուծման շահեկան և արդյունավետ տարբերակը</li> <li>• Ձեռնարկվող քայլերը</li> </ul> <p>Վերապատրաստման ենթակա քաղ. ծառ. թվաքանակը՝ 415<br/>Ծրագրի տևողությունը՝ 2 շաբաթ<br/>Հեռավար ուսուցման մոդուլի ծավալը՝ 20-49 էջ<br/>Խմբերի քանակը՝ 16 (առավելագույնը՝ 35 մասնակից)</p>                                                   | դրամ           | 237 960                              | 1                | ՀՀ, ք.Երևան<br>Մատակարարի նշած հասցեում | 2021 թվականի 3-րդ և 4-րդ եռամսյակներ |
| 3                                    | 79631200/20                                                               | <p>3.Աշխատակիցների վերապատրաստման ծառայություններ</p> <p><b>Բարեվարքություն.</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• Բարեվարքության շրջանակը հանրային ծառայությունում</li> <li>• Բարեվարքության կառավարում</li> <li>• Բարեվարքությունը անձնակազմի կառավարման գործընթացներում</li> <li>• Բարեվարքության բաղադրիչները</li> </ul> <p>Վերապատրաստման ենթակա քաղ. ծառ. թվաքանակը՝ 152<br/>Ծրագրի տևողությունը՝ 2 շաբաթ<br/>Հեռավար ուսուցման մոդուլի ծավալը՝ 20-49 էջ<br/>Խմբերի քանակը՝ 6 (առավելագույնը՝ 35 մասնակից)</p>                                                    | դրամ           | 138 000                              | 1                | ՀՀ, ք.Երևան<br>Մատակարարի նշած հասցեում | 2021 թվականի 3-րդ և 4-րդ եռամսյակներ |
| 4                                    | 79631200/21                                                               | <p>4.Աշխատակիցների վերապատրաստման ծառայություններ</p> <p><b>Հաշվետվությունների մշակում.</b></p>                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                    | դրամ           | 138 000                              | 1                | ՀՀ, ք.Երևան<br>Մատակարարի               | 2021 թվականի 3-րդ և                  |

|   |             |                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                     |      |         |   |                                         |                                       |
|---|-------------|---------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|------|---------|---|-----------------------------------------|---------------------------------------|
|   |             | <ul style="list-style-type: none"> <li>Հաշվետվությունների նպատակը, ձևաչափը</li> <li>Տեղեկատվության հավաքագրում, վերլուծություն</li> <li>Հաշվետվության մեջ տեղեկատվության տրամաբանական կառուցվածքը</li> </ul> <p>Վերապատրաստման ենթակա քաղ. ծառ. թվաքանակը՝ 165<br/>Ծրագրի տևողությունը՝ 2 շաբաթ<br/>Հեռավար ուսուցման մոդուլի ծավալը՝ 20-49 էջ<br/>հմբերի քանակը՝ 6 (առավելագույնը՝ 35 մասնակից)</p>                                                                                                                                                                |      |         |   | նշած հասցեում                           | 4-րդ եռամսյակ-ներ                     |
| 5 | 79631200/22 | <p>5.Աշխատակիցների վերապատրաստման ծառայություններ<br/><b>Տեղեկատվության հավաքագրում, վերլուծություն.</b></p> <ul style="list-style-type: none"> <li>Տեղեկատվության հիմնական աղբյուրները, այդ թվում արտաքին</li> <li>Տեղեկատվություն ստանալու ձևերը</li> <li>Տեղեկատվական տեխնոլոգիաների և համակարգերի կիրառումը տեղեկատվության ի հայտ բերման և համակարգման համար</li> </ul> <p>Վերապատրաստման ենթակա քաղ. ծառ. թվաքանակը՝ 142<br/>Ծրագրի տևողությունը՝ 2 շաբաթ<br/>Հեռավար ուսուցման մոդուլի ծավալը՝ 20-49 էջ<br/>հմբերի քանակը՝ 5 (առավելագույնը՝ 35 մասնակից)</p> | դրամ | 126 000 | 1 | ՀՀ, ք.Երևան<br>Մատակարարի նշած հասցեում | 2021 թվականի 3-րդ և 4-րդ եռամսյակ-ներ |
| 6 | 79631200/23 | <p>6.Աշխատակիցների վերապատրաստման ծառայություններ<br/><b>Կոնֆլիկտների կառավարում.</b></p> <ul style="list-style-type: none"> <li>Կոնֆլիկտների էությունը և ձևերը</li> <li>Կոնֆլիկտների զարգացման փուլերը</li> <li>Կոնֆլիկտների կառավարման հիմնական մեթոդները</li> </ul> <p>Վերապատրաստման ենթակա քաղ. ծառ. թվաքանակը՝ 103<br/>Ծրագրի տևողությունը՝ 2 շաբաթ<br/>Հեռավար ուսուցման մոդուլի ծավալը՝ 20-49 էջ<br/>հմբերի քանակը՝ 4 (առավելագույնը՝ 35 մասնակից)</p>                                                                                                      | դրամ | 114 000 | 1 | ՀՀ, ք.Երևան<br>Մատակարարի նշած հասցեում | 2021 թվականի 3-րդ և 4-րդ եռամսյակ-ներ |
| 7 | 79631200/24 | <p>7.Աշխատակիցների վերապատրաստման ծառայություններ<br/><b>Բողոքների բավարարում.</b></p> <ul style="list-style-type: none"> <li>Բողոքարկման գործընթացների կառավարում</li> <li>Բողոքարկումների կառավարման համար անհրաժեշտ ընդհանուր հմտությունները</li> <li>Անաչառություն, օբյեկտիվություն</li> <li>Տրամաբանական փաստարկում</li> </ul> <p>Վերապատրաստման ենթակա քաղ. ծառ. թվաքանակը՝ 64<br/>Ծրագրի տևողությունը՝ 2 շաբաթ<br/>Հեռավար ուսուցման մոդուլի ծավալը՝ 20-49 էջ<br/>հմբերի քանակը՝ 2 (առավելագույնը՝ 35 մասնակից)</p>                                          | դրամ | 90 000  | 1 | ՀՀ, ք.Երևան<br>Մատակարարի նշած հասցեում | 2021 թվականի 3-րդ և 4-րդ եռամսյակ-ներ |
| 8 | 79631200/25 | <p>8.Աշխատակիցների վերապատրաստման ծառայություններ<br/><b>Ժամանակի կառավարում.</b></p> <ul style="list-style-type: none"> <li>Ժամանակի պլանավորում</li> <li>Նպատակների հստակեցում</li> <li>Առաջնահերթությունների սահմանում</li> <li>Ժամանակի ծախսի վերլուծություն</li> </ul> <p>Վերապատրաստման ենթակա քաղ. ծառ. թվաքանակը՝ 212<br/>Ծրագրի տևողությունը՝ 2 շաբաթ<br/>Հեռավար ուսուցման մոդուլի ծավալը՝ 20-49 էջ<br/>հմբերի քանակը՝ 8 (առավելագույնը՝ 35 մասնակից)</p>                                                                                                 | դրամ | 151 920 | 1 | ՀՀ, ք.Երևան<br>Մատակարարի նշած հասցեում | 2021 թվականի 3-րդ և 4-րդ եռամսյակ-ներ |

|    |             |                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                           |      |         |   |                                            |                                      |
|----|-------------|-------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|------|---------|---|--------------------------------------------|--------------------------------------|
| 9  | 79631200/26 | <p>9.Աշխատակիցների վերապատրաստման ծառայություններ<br/><b>Ելույթների նախապատրաստում և կազմակերպում.</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• Վերլուծական մտածողություն</li> <li>• Վստահության խթանում</li> <li>• Բանախոսը</li> <li>• Ելույթի կազմակերպում և ուրվագծում</li> <li>• Ելույթը սկսելը</li> <li>• Հանրային ելույթ</li> </ul> <p>Վերապատրաստման ենթակա քաղ. ծառ. թվաքանակը՝ 36<br/>Ծրագրի տևողությունը՝ 2 շաբաթ<br/>Հեռավար ուսուցման մոդուլի ծավալը՝ 20-49 էջ<br/>Խմբերի քանակը՝ 1 (առավելագույնը՝ 36 մասնակից)</p>      | դրամ | 84 000  | 1 | ՀՀ,<br>ք.Երևան<br>Մատակարարի նշած հասցեում | 2021 թվականի 3-րդ և 4-րդ եռամսյակներ |
| 10 | 79631200/27 | <p>10.Աշխատակիցների վերապատրաստման ծառայություններ<br/><b>Փաստաթղթերի նախապատրաստում.</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• Գաղափար փաստաթղթի մասին. փաստաթղթերի նշանակությունը կառավարման համակարգում:</li> <li>• Փաստաթղթերի դասակարգումը</li> <li>• փաստաթղթերի որակյալ պատրաստում</li> <li>• պաշտոնական նամակագրություն</li> </ul> <p>Վերապատրաստման ենթակա քաղ. ծառ. թվաքանակը՝ 156<br/>Ծրագրի տևողությունը՝ 2 շաբաթ<br/>Հեռավար ուսուցման մոդուլի ծավալը՝ 20-49 էջ<br/>Խմբերի քանակը՝ 6 (առավելագույնը՝ 35 մասնակից)</p> | դրամ | 138 000 | 1 | ՀՀ,<br>ք.Երևան<br>Մատակարարի նշած հասցեում | 2021 թվականի 3-րդ և 4-րդ եռամսյակներ |
| 11 | 79631200/28 | <p>11.Աշխատակիցների վերապատրաստման ծառայություններ<br/><b>Աշխատակազմի կառավարում.</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• Անձնակազմի պլանավորում</li> <li>• Աշխատողների հավաքագրում</li> <li>• Կադրերի ընտրություն</li> <li>• Շահադրդման մեխանիզմների կիրառում</li> <li>• Աշխատողների ուսուցում և զարգացում</li> <li>• Կատարողականի կառավարում</li> </ul> <p>Վերապատրաստման ենթակա քաղ. ծառ. թվաքանակը՝ 41<br/>Ծրագրի տևողությունը՝ 24 ժամ<br/>Խմբերի քանակը՝ 1 (առավելագույնը՝ 41 մասնակից)</p>                                 | դրամ | 144 000 | 1 | ՀՀ,<br>ք.Երևան<br>Մատակարարի նշած հասցեում | 2021 թվականի 3-րդ և 4-րդ եռամսյակներ |
